

ԴԻՄՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳ ԵՎ ՌԻԺ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ
ՔՆՆՉԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱՆ
ԳՆԴԱՊԵՏ ՏՈՒՅԵԱՆԻՆ
Երեւան, Հայաստան

Ժիրայր ՍԵՓԻԼԵԱՆԻ Պաշտպան Յանձնախումբին
Փարիզ, Ֆրանսա

Յարգարժան պարոն գնդապետ,

Ժիրայր ՍԵՓԻԼԵԱՆԻ Պաշտպան Յանձնախումբը կը դիմէ Ձեզի, որ ազատ արձակեք ծեղ մօտ արգելափակուած՝ Ղարաբաղեան պատերազմի ամենաանուանի հրամանատարներէն, ԼՂՀ Մարտական Խաչ Ա. կարգի շքանշանակակիր, հայկական գինուած ուժերու պահեստի փոխգնդապետ Ժիրայր ՍԵՓԻԼԵԱՆին:

1990-1996 ժամանակաշրջանին, թէ Արցախեան պատերազմի ընթացքին եւ թէ անկէ ետք՝ Արցախի բանակի կառուցման ժամանակ, բոլորը ծանօթ են ցանկացած հայու միայն պատիւ բերող Ժիրայր ՍԵՓԻԼԵԱՆԻ ծառայութեան՝ հայրենիքին, ազգին ու պետութեան: Ժիրայր ՍԵՓԻԼԵԱՆը, 23 տարեկան հասակին, եղած է կամաւրական՝ հիւսիսային Արցախի ինքնապաշտպանութեան կոհիներուն, դեկավարած է Յայաստանի եւ սփիւրքի կամաւրականներու միաւրեներ՝ ԼՂՀ զանազան շրջաններու մէջ տեղի ունեցած մարտական գործողութիւններու ժամանակ, հրամանատարը եղած է Ատրպեյճանի դեմ փառապանծ յաղթանակներ արձանագրած ԼՂՀ պաշտպանական բանակի Շուշիի առանձնակի գումարտակին, ապա ծառայած է որպէս ՊԲ դիվիզիայի փոխհրամանատար եւ ԼՂՀ ճող պաշտպանական շրջանի հրամանատար:

Ան արժանացած է ԼՂՀ Մարտական Խաչ Ա. կարգի շքանշանի, բանակային եւ պետական զանազան պարգևներու, վերադաս հրամանատարներու անվերապահ գնահատանքին եւ ժողովրդային լայն համակրանքի՝ թէ Արցախի, թէ Յայաստանի եւ թէ Սփիւրքի մէջ: Վերջինիս համար մանաւանդ Ժիրայր ՍԵՓԻԼԵԱՆը միշտ հանդիսացած է հայ մարդու օրինակելի կերպար, հայրենասիրութեան, ընկերասիրութեան, զոհողութեան, բարոյական անեղծ նկարագրի, սկզբունքայնութեան, անկաշառութեան, օրինապահութեան, պատասխանատուութեան եւ ազգի գերագոյն շահերուն հաւատարիմ մնալու իր յատկանիշներով:

Մենք վստահ ենք, որ Ժիրայր ՍԵՓԻԼԵԱՆԻ ազատ արձակումը կրնայ միայն օգտակար դառնալ քննութեանը այս գործին, որուն շրջանակներուն մէջ ան ծերբակալուեցաւ: Կը հաւաստիացնենք Ձեզի, որ այս վստահութիւնը կը բաժնեն տասնեակ հազարաւոր հայ մարդիկ Լիբանանի հայ համայնքին մէջ եւ ամբողջ Սփիւրքի տարածքին:

Կը յուսանք, որ դրական լուծում կու տաք այս դիմումին:

Յարգանքով՝

Ժիրայր ՍԵՓԻԼԵԱՆԻ Պաշտպան Յանձնախումբ

Հայրանուն Անուն

Ստորագրութիւն

Հմայլ